ՀՏԴ 82-93:398.21
ԳՄԴ 84(0)-4+82.3(0)
Ա 653

Ա 653 Աշխարհի իմաստուն հեքիաթներ.- Եր.: Էդիթ Պրինտ, 2017.-328 էջ:

«Աշխարհի իմաստուն հեքիաթներ» գիրքը 2015թ. «Արմենպրես» հայկական լրատվական գործակալության կողմից ճանաչվեց նախորդ տարվա մանկական բեսթսելլեր: Այն դարձավ հազարավոր փոքրերի և մեծերի սիրելի գիրքը: Այժմ վերջինս ներկայանում է նորովի՝ նոր նկարազարդումներ և ձևավորում, նոր իմաստուն հեքիաթներ...

Աշխարհի իմաստուն հեքիաթներ նախագիծը ստեղծվել է ոչ միայն երեխաների, այլև բոլորի համար, ովքեր ցանկանում են կրկին ու կրկին մուտք գործել ճշմարիտ արժեքների, անսպառ իմաստության լուսավոր աշխարհ...

ՀՏԴ 82-93:398.21
ԳՄԴ 84(0)-4+82.3(0)

ISBN 978-9939-75-174-0

© Էդիթ Պրինտ, 2017

Կարդալով բացենք
դուռն իմաստության...

# Կախարդական Յուն Սուն

(չինական ժողովրդական հեքիաթ)



Մի ժամանակ Ֆուչժոուի մոտերքում ապրում էր մի փոքրիկ տղա՝ Յուն Սու անունով: Նրա հայրը շուտ է մահանում, մնում են ինքն ու մայրը: Նրանք աղքատ էին, տունը՝ դատարկ. պատահում էր, որ նույնիսկ մի բուռ բրինձ էլ չէին ունենում, որ ուտեն:

Երբ Յուն Սուն մեծանում է ու պետք է արդեն ուսում ստանար, չուներ ո՛չ թուղթ, ո՛չ թանաք, ո՛չ էլ վրձին: Բայց նա հաստատակամորեն որոշում է. «Պետք է սովորեմ»: Նա երկար է մտածում, թե ինչպես խորամանկորեն ազատվի կարիքից:

Առավոտյան գնում է իր հարուստ հարևանի մոտ և ասում.

– Ես լսել եմ, որ Դուք տան աշխատող եք փնտրում: Ընդունեք ինձ: Ճիշտ է, տարիքով մեծ չեմ, բայց ես շատ բան չեմ էլ ուզում աշխատանքի դիմաց. թո՛ւյլ տվեք ինձ միայն երբեմն նայել, թե ինչպես են սովորում Ձեր որդիները, և ես գոհ կլինեմ:

Հարուստն ուրախանում է. անվարձ աշխատողն իր ոտքով է եկել, և համաձայնում է:

Յուն Սուն առավոտից երեկո աշխատում էր, չարչարվում հարուստի տանը: Բոլոր կեղտոտ ու ծանր աշխատանքները թողնում էին նրան: Բայց դրա փոխարեն նա կարողանում էր երբեմն նայել այն գրքերին, որոնցով սովորում էին տանտիրոջ երեխաները: Մեկ-մեկ էլ հաջողվում էր լսել ամբողջ դասը: Երբ գալիս էր նրանց ուսուցիչը, Յուն Սուն թաքնվում էր անկյունում, նստում և ականջ էր դնում:

Մեկ տարի անց նա արդեն շատ բառեր էր սովորել, գիտեր դրանց իմաստը, բայց դժբախտությունն այն էր, որ գրել չգիտեր: Եվ ինչի՞ վրա գրեր: «Ի՞նչ անել»,- մտածում է Յուն Սուն: Երկար մտածելուց հետո հնարը գտնում է:

Յուն Սուն ու իր մայրն ապրում էին ծովափին՝ փոքրիկ տնակում: Ալիքներն ամբողջ օրը հարթում էին ծովափնյա մանր ավազը: Յուն Սուն վերցնում էր մի երկար ձող ու գնում ծովափ: Նա արագ-արագ մի բառ էր գծագրում ավազի վրա: Ալիքը գալիս և գրածը սրբում էր: Նորից էր գծագրում, ուրիշ մի ալիք դարձյալ սրբում էր նրա գրածը: Այդպես նա կարողանում էր անվերջ գրել՝ առանց վրձնի ու թղթի, բայց հիմա էլ գրքեր չուներ:

Մի անգամ Յուն Սուն մոտենում է իր հարուստ տիրոջն ու ասում.

- Ես Ձեզ համար աշխատում եմ առանց վարձատրության: Հիմա ուզում եմ խնդրել, որ ինձ վարձատրեք: Բայց եթե թույլ տաք ինձ կարդալ Ձեր գրքերը, ես համաձայն եմ աշխատել էլի մեկ տարի:

Տանտերը չէր ուզում կորցնել այդպիսի ձեռնտու աշխատողին, ուստի և համաձայնում է: Յուն Սուն արդեն գրքեր էլ ուներ:

Մոտենում էր ձմեռը: Օրերն սկսել էին կարճանալ: Նա աշխատում էր մինչև մութն ընկնելը: Ցերեկվա ժամերն արդեն չէին բավականացնում նրան: Յուն Սուն այնքան աղքատ էր, որ չէր կարող նույնիսկ ձեթ գնել ճրագի համար: Բայց համառ էր ու հաստատակամ: Լուսնկա գիշերները Յուն Սուն կարդում

# Բովանդակություն


Համառոտակամ Յոն Սոն.....5
Ինչն է ավելի կարևոր.....9
Գրավ դրած մորուքը.....19
Անճոռնի բադիկը.....23
Ծերունիների իմաստնությունը.....39
Գոռոզ չոչիկը.....45
Հայրացում.....49
Թագավորի որդու առաջին դասերը.....57
Երջանիկ արքայազնը.....61
Իմաստուն թվեճը.....79
Աղքատն ու երջանկությունը.....83
Ո՞ւմ գանձն է ավելի լավը.....87
Կտցահարված սիրտը.....91
Խրատ թագավորներին.....95
Անխելք մարդը.....99
Հայրենի տան մեխը.....105
Մարդն իր համար չի ծնվում.....115
Լյու եղբայրները.....127
Արծաթե դրամը.....133

Մի զույգ մաշիկ ........ 141
Անահիտ ........ 151
Դժբախտությունը ........ 157
Մոր սերը ........ 161
Ոսկի ձեռքեր ........ 167
Տեր պապն ու թոռը ........ 173
Ոսկուց թանկ երեք խորհուրդ ........ 177
Գողացած բանը փոր չի կշտացնի ........ 183
Բարի գործը ........ 187
Ուրիշների խորհուրդները ........ 195
Մի պարկ խնձոր ........ 199
Հայրը և զավակները ........ 205
Վուշը ........ 213
Խելքն ու աշխատասիրությունը ........ 221
Խոսող ձուկը ........ 233
Երեք ոսկե աղյուս ........ 237
Արծիվը աղավնաբնում ........ 239
Հաճույքը ........ 251
Եսասեր հսկան ........ 255
Իմաստուն տղան ........ 263
Թե ինչպես հայրը որդուն խելք սովորեցրեց ........ 267
Ոսկի ձկնիկը ........ 275

Վաստակած մեկ ռուբլին ....................................................281
Թագավորի նոր հագուստը ..............................................285
Չկա չարիք առանց բարիքի................................................295
Հայրական երեք խորհուրդ................................................299
Տղան և օձը..........................................................................303
Լավ զրույցը.........................................................................307
Աղքատի կերածը վարձք է ................................................311
Սուլեյման թագավորը և իմաստուն կռունկը ......................317
Երկնագույն լուսացույցը ....................................................321